



# ՕՐԱԳԻՐ ՉՄԻՒՌՆԻԱՅ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՐԻ ՏԱՐԻ

ՉՄԻՒՌՆԻԱ ՇԱԲԱԹ 11 ՄԱՐՏ 1872

ԹԻԻ 931

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կենցաղայէ տ հասարակութեան ուշադրութիւնը Աւստրալիայի ծանր խնդրոյն վերայ ամփոփեալ է ըստ մեծի մասին : Եւրոպէի մէջ հաստատեալ միջնորդ գաղութացի ժողովը անցեալ շաբթու պիտի դամարուէր յիշեալ վէճին վրայօք խորհելու և երկու կողմէն յառաջ բերուած փաստերը քննելու համար :

Կըսուի թէ Անգլիոյ կառավարութիւնը յանձնառու կըլլայ միջնորդ գաղութացի ընկու որոշումը ընդունել, բայց միայն 'ի մասին ուղղակի փաստոց Աւստրալիայի : Իսկ անուղղակի կերպիւ եղած փաստոց զառով յիշեալ կառավարութիւնը 'որ պայմաններով նոր յանձնաժողով մի հաստատել կուղի :

Ինտոնի ինքնիկ Բոսի լրագիրը վստահութեամբ պուշակել կըկարծէ որ Աւստրալիայի խնդիրը խաղաղութեամբ պիտի վերջանայ :

Վիքթորիա թաղուհւոյն դահաճառանգ որդւոյն, Կալէսի իշխանին առողջութիւնը կատարելապէս հաստատուելով, Արթիւն արքայազունն (հարձրութիւնը ամոնոյս առաջին օրը հասաւ 'ի փարիզ և անկէջ 'ի Վէրսայլ երթալով անտակցեցաւ հասարակապետութեան նախագահին հետ, և անոր փոխադարձ այցելութիւնը ընկալաւ : Այս այցելութեանց քաղաքական նշանակութիւն տուողներ պակաս չեն, բայց մեք շատերուն հետ, չեմք կարծիք թէ ծանր հիւանդութեան նոր ելլող յիշեալ իշխանին քաղաքային սրբէ պաշտօն մի յանձնուած լինի, թէ և ամենաթեթիւ :

Հեռագիրը մեծ հայրենասիրի մը՝ հոշակաւոր հասարակապետական Մաժինի մահուան լուրը կըբերէ մեզ : Մաժինի խոսովայոյ մէջ համարուած էր շատերուն համար, սակայն անուրանալի է որ իւր բոլոր կենաց սասարկէն մէջ Մաժինի միայն մէկ դազափարի կըծառայէր, այս է, իւր հայրենաց ազատութեան : Անիկ էր որ անխնայ յարասեղութեամբ միջոց 'ի գործ կըղնէր, իւր հայրենակիցները կըղրդէր, իտալիայի ազատութիւնը ձեռք բերելու համար : Իտալիա չէր կրնար չսիրել զինքը, և այս պատճառաւ էր անշուշտ որ Հեռովայի բարձրման թիւ մէջ համակրական յայտարարութիւններ անդունեցան Մաժինի մահուան առթիւ :

Գաղղիոյ մէջ թաղաւորական կուսակցութիւնները օրըստօր կըզօրանան, և հասարակապետութիւնը վտանգի մէջ կըթողուն : Թիւրքոյ որ շատ առիթներու մէջ հանդիսաւոր կերպով խոստացաւ հասարակապետութիւնը անխախտ պահել, շատ դժուարութեամբ նոյն կուսակցութիւններու դէմ կըմըցի :

Անոյս սկիզբը Վէրսայլի կառավարութիւնը 360 միլիոն ֆրանք ևս վճարելով (հրուսիոյ կառավարութեան) երկրորդ միլիարի վճարումը լրացուցած է, և կըմնայ տակաւին վճարելիք (հրուսիոյ կառավարութեան) երեք միլիար ֆրանք :

Սպանիայէն եկած լուրերը շատ տխուր են : Գեղափոխութիւնը արդի կառավարութիւնը կործանել կըսպանայ : Սպանիոյ Ամէսե թագաւորը՝ որ Վիքթոր-Էմանուէլ թագաւորին երկրորդ որդին է, ի տալիայէն օղնութիւն խնդրէր է, և այս օրերս Եւրոպայէն հասած հեռագրական լուրերուն նայելով, իտալիայի կառավարութիւնը նաւատորմի մը ուղղած է գէպ 'ի Սպանիա :

Չեմք գիտեր թէ Սպանիայի շուրթերուն մէջ իտալիայի նաւատորմի մը ներկայութիւնը ինչ ազդեցութիւն պիտի ունենայ Սպանիացոց վրայ : արդեօք յեղափոխութիւնը զսպելու պիտի օգնէ, թէ նոյնը աւելի զրգուբու շարժառիթ պիտի լինի :

Յունաստանի խորհրդանոցին մէջ վիճաբանական մաքառումները այն աստիճան զրգուեցին հակակարծիք կուսակցութեանց կիրքերը, որ արևելահեղ կուսներ ծագեցան և ոչ սակաւ անձինք սպանուեցան :

### ԱԶԳԱՔԻՆ

Արշալուսոյ 929 բուով նրատարակեցինք, Սոյլ խնդրոյն նկատմամբ ամենայն Հայոց կարողիկոսին յանդիմանական հետազոտիչ ուղղեալ առ Կ. Պօլսոյ սրբազան Պատրիարքին : Ներկայ բուովս կընրատարակեմք Նորին վեհափառ Սրբազանքեան ազգարարական կոնգրէսը, զոր յուղարկած է Բեթլոյ առաջնորդ տէր Մկրտիչ սրբազան արքեպիսկոպոսին, Նորին Գերապատուութեան՝ Սոյլ կարողիկոս քնտրուեցի յառաջ :

Գերոջ ծառայ Գրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ կախարհապետ և կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար և թոռոյ Արարատեան առաքելական մայր եկեղեցւոյ սրբոց կաթողիկէ Էջմիածնի, գերա. Մկրտիչ արքեպիսկոպոսի հարազատի մայր Աթոռոյ խնայալ Տէր :

Յօրէ յորմէ հետէ ամբարձար Քան Հայրապետական անհասանելի կամօքն Աստուծոյ և ընտրութեամբ լրութեան ազգիս, զօրհանապազ նուիրին ժամբ և ընթացք կենացս 'ի հոգացողութիւն և 'ի պաշտպանութիւն Հօտին Գրիստոսի, 'ի բարոյական վերականգնումն նորին և 'ի պայծառութիւն եկեղեցւոյ մերոյ սրբոց, աւանդապահ կացեալ նախնի սրբոց Հարց կանոնայ, և հաւատարմ Գրիգորի մերոյ անտերիւր և փրկարար վարդապետութեան, որ նախամեծար քարոզէ զսեր, և զմիութիւն և զեղբայրսիրութիւն :

Ապաքն անհարկն սղէտք և անբարեբի միշտք են որդեգորով Հօր տեսնել վտարանգր և անկերտափառ զսիրելի որդիս տարարազգ հայրենեաց, մանաւանդ զի ուրեք ուրեք առաջնորդեալք նոյս 'ի մերոց վարձեալ պաշտօնից և յօտարաց յառաւել ևս 'ի հեռուորն վարին անապատ պանդխտութեան, տակաւ առ տակաւ խորթանալ ըստ ամենայնի 'ի զթառատ զրկաց Մօրն լուսոյ : Արդ գոյով մեր հեռի 'ի վտարանդեցոյ որդւոց մերոց սիրելեաց բազմօք իմն ասպարիզօք, քանի՛ տաղմապ, և սրջամբ դժուարին է մեզ ընդ փոյթ հասանել օգնութեան և զառաջս առնուլ փնտուց և զարման մատուցանել վտանգայն, որպէս և յայս նուազ ուր ուրմն լուաք ըզպարականն վճիռ երեսփոխանական ժողովոյն Կ. Պօլսոյ վան ընտրութեան ձերոյ և վաւերացման 'ի հակաթոռն կաթողիկոսութեան Սոյ :

Ձեռն ինչ պէտք բացատրութեանց 'ի հմտութիւն անցիցն յաղագս կանխատես լինելոյ ամենայն վտանգաց ապառնոյն, պառակտման ասեմ և զըրման ազգի մերոյ և եկեղեցւոյ 'ի վիճ կորստեան 'ի խոտոր ընթացից Գաւրիարբարանին Պօլսոյ : զի եթէ բարոյական միութիւն Հայաստանեաց' զոր պահպանեցին սուրբ Հարց եկեղեցւոյ մերոյ 'ի դառն ժամանակս հալածեալք՝ շարժարեալք և զմահ անգամ ճաշակեալք 'ի բազմադիմի թշնամեաց, և առ մեզ աւանդեալ հասուցին, քանի՛ առաւել յայսմ ազատութեան ժամանակս, փոխանակ առաւել ևս միանալոյ հաստապինք շարկապօք սիրոյ՝ և լինելոյ հաւատարմ ժառանգք նուիրական աւանդութեանց նախնեաց, անպատեհ խնդիրս յարոյցանելով առիթ լինին բաժանման միութեան եկեղեցւոյ Հայոց, արկանելով զանձինս ընդ ծանր պատասխանատուութեամբք առաջի Աստուծոյ և եկեղեցւոյ մերոյ, և որ առաւել փնտասկարն է՝ յեկեղեցականաց ոմանք յանձնապատուան ժպրհին 'ի նոյն, որոց չներեն երբէք եկեղեցական իրաւունք ձեռնամխել, և տքնին արկանել և զՁեզ 'ի նոյն վիճ :

Արդ արժանացեալ Ձեր պաշտօնի առաքելութեան՝ այսինքն է սրբազան աստիճանի կախարհապետութեան աստ 'ի Ս. Էջմիածնի, և տուեալ զուխտս և զերդումն 'ի մայր Տաճարիս կաթողիկէի հաւատարմ կալ և մնալ յամենայնի իրաւանց և ծայրագոյն իշխանութեան մայր Աթոռոյս և գահակալի նորին և յաջորդացն, անշուշտ եմք, զի հեռի է 'ի մտաց ձերոց գործելի փնտս ընդհանրութեան ազգիս և հակառակ կամաց յաջորդաց սրբոց առաքելոցն Թաղէի և Բարդուղիմեայ և առաքելասարաս

Հօր մերոյ Աստուծոյն երկրորդի Ս. Գրիգորի, և ընդունել զայնալիս պաշտօն, որ ոչ պատիւ ընծայէ Ձեզ և անտարակոյս կարէ զհետ բերել զկործանումն ազգի և եկեղեցւոյ առ յանայն, մանաւանդ առանց կանխազեւտութեան և բարեկարգելոյ մեր զպարթիւն ընթացս վիճակաւորաց Սոյ և Աղթամարոց, զոր ձեռնարկեալ լիկ էաք 'ի լինել մեր 'ի վերջին նուազի 'ի Կ. Պօլսո, որում չէքն անտեղեակ :

Յոյս մեր հաստատուն է 'ի Տէր, զի անմոռոյ 'ի մտի ունելով զսրբազան սարափս կոչման և աստիճանի ձերոյ և զուխտ և զերդումն որ առ Աստուած, զոր մեր յիշեցուցանեմք Ձեզ Հայրապետական սյուս սիրոյ և օրհնութեան կոնգրակաւս, և աղթս առնեմք յամենայն ժամ, և ընթացք յոյժ լինել ձեզ ըստ ամենայնի նախնեմարն զիր իրաւանց մայր Աթոռոյս վան օգտի և միութեան ազգիս, և յարգել յամենայն սրտէ և 'ի մտաց զառաճման և զկանոնս նախնեաց մերոց սրբոց, որ զընդգեղարն և զհակառակորդս ենթարկեն զատասպարտութեան, և արժանաւոր որդի արժանաւոր Ս. Հարց՝ և արժանեւոր տիր աշակերտ աւանդապահ սուրբ վարդապետաց հանդիսանալ 'ի փառս միոյն Աստուծոյ Ս. Երբբբութեան, յօղուտ տուապեալ ազգիս և 'ի պատիւ անուան ձերոյ որով միութարութիւն մեծ լիցի բազմապիշտ սրտի մերոյ :

Ողջ վերուք զօրացեալ Տէրաբար :  
ԳԵՌԳ. Գ.  
Կաթողիկոս ամենայն Հայոց :  
Ի 15 Դեկտ. 1871, 'ի Ս. Էջմիածնի :

Ահաւասիկ Եզրիպտոսի ազգային միջնորդութեան առ Կ. Պօլսոյ սրբազան Պատրիարքն գրած նամակին պատճէնը, զոր մեր նախընթաց թուով չկրցանք հըրատարակել՝ տեղ չունենալուս պատճառաւ :

Ամենապատիւ սրբազան Հայր :

Ըստ արտօնութեան սահմանադրական օրինաց, Եզրիպտոսացի օրինաւոր քուէարկութեամբ, մեզ հաւար Ասաջնորդ մի ընտրած էինք ասիէ հինգ տարի առաջ և քուէից արդիւնքը կեղոթ. Արաջութեան ինացուցած :

Արդ այս անգամ Ձեր Սրբազանութիւնը ինացանք քաղաքական Ժողովոյս, թէ գերա. Մերսիդե կախարհապետ սահմանադրապէս ընտրութիւնը վտարարած է կեղոթնական Արաջութեան և առաջնորդական հրովարտող պաշտօնապէս Ն. Սրբազանութեան յանձնուած, որով Եզրիպտոսացոց արգար իրաւունքն թէ և ոչ, բայց 'ի վերջոյ յորդուած ըլլալուն, իրենց չորհակամութիւնները կըյայտենն :

Ձեր Սրբազանութիւնը՝ ըստ խնդրոյ Աստուածատուր վարդապետի, կըպահանջէ որ նոյնին աստ սենեկի մը մէջ ունեցած գոյքը՝ Երուսաղէմայ միտրան արժատ. Ներոնս վարդապետի յանձնուի : Արաջութիւն Ձեր Սրբազանութեան հրամանը գործադրելու պատրաստ ըլլալը ինացընելով, կաղաչէ որ վերոյիշեալ գոյցն ցուցակը զրկել բարեհաճիք, որ ըստ այնմ յանձնէ զանոնք :

Կեղոթնական Արաջութիւնը տասն տոմս առաջ, ըստ խնդրոյ ամենա. Եսայի Պատրիարքի 'ի իւր փոխանորդին, հրաւիրած էր զբարեխնամ առաջնորդ մեր 'ի Կ. Պօլսո, որպէսզի Երուսաղէմայ միտրան Աստուածատուր վարդապետի՝ ազգիս կնիքները անպատուած ըլլալուն համար ծագած գժտութեանց զատը տեսնուի և յանցաւորը պատժուելով՝ անմեղ վարձատրուի : Բայց Ձեր Սրբազանութիւնը՝ ազգիս պատուոյն վերաբերեալ այն ամենաճանր խնդրոյն՝ հաշտութեամբ վերջացած ըլլալը չեւած է միայն. և այն՝ իբր անձնական վիճ, որուն վերայ կըկատահայք մեծադուամբ ծախքը ընել ստիպուեցան : Արդ Վարչութիւնս փութաց այն զատին տեղեկագիրը պահանջել զերա. Մերսիդե արքեպիսկոպոսի, որպէսզի կարենայ ստոյգ և կատարեալ տեղեկութիւն ստանալ այն ազգային պատուոյ և շահու խնդրոյ վերայ, աղաչելով զնա միանգամայն որ Ձեր Սրբազանութեան պաշտօնական նամակին մէջ յիշուած հրահանգին՝ ժողովոյս վերաբերեալ մասերը, եթէ կան, մեզ ինացնել հաճի :

Երբևէ Սրբազնութիւնը մասնաւոր նամակաւ մի տեղեկագիրը և հրահանգին մի քանի զիտաւոր մասերը ընդօրինակելով զրկած էր մեզ: Դորովս նկատողութեան առնելով հրահանգին յօդուածները, խմայուց Երբևէ Սրբազնութեան թէ չկրնար ընդունել այնպիսի յօդուածներ հրահանգի, որոնք ազգիս վիճակը աւելի կը նեղեն. նախ քան զի Խառն ժողովը 1869 թուականին մուքաթթայի տուրքը հնգապատիկ աւելցուցած ըլլալը պարտաբերու տակ ընկճած Վարչութիւնս յակամայից կը տրտաւորու մեթեւ և չտարակուսիր թէ Խառն ժողովը մեծապատիւ անդամք սոյն անընդունելի որոշումը ըրած են առանց քաջ վերահասու ըլլալու Գահիրէի ազգային ելեմանց արդի վիճակին: Երկրորդ հրահանգը կը զգուշացնէ զգերա. Մեսրոպը արքեպիսկոպոսը և զՎարչութիւնս՝ Երուսաղէմայ կալուածոց սրբէ միջամտութիւն ընելէ, պատուիրելով սակայն չըլանալ ամեն պաշտպանութիւն, եթէ նոյն կալուածոց Փոխանորդը Վարչութեանս զիմէ:

Վարչութիւնս՝ ինչպէս մինչ ցարդ, նաև սակէ ետքը իւր բարեխնամ Առաջնորդով, ամեն միջամտութենէ չէ թէ միայն սխալի զդուշանայ, այլև պիտի փութայ սրբէ հաղորդակցութիւն չունենալ Երուսաղէմայ կալուածոց փոխանորդ սրբէ միաբանի հետ. որոյ պաշտօնը առջինն տարբեր պիտի չըլլայ. այսինքն գծտութիւն սերմանել և կրօնակալ Վարչութիւնս սոյն փորձը բաւականէն աւելի տեսաւ Աստուածատուր վարդապետի վերայ, ինչպէս նաև զարմանալով կարգաց ամենապա. Եսայի Պատրիարքին Սիօնի մէջ հրատարակածները և Չեր Սրբազնութեան զրած պաշտօնական զրպարտալից նամակները՝ ի պաշտպանութիւն անվստիք ընթացից Աստուածատուր վարդապետի:

Վարչութիւնս այս իրաւացի պատճառներով չկրնար Երուսաղէմայ միաբանի մը փոխանորդութիւնը սրբէ պարագայի մէջ ճանչնալ և ուղղակի անոր գործոց միջամուս ըլլալ, որպէս ի պատ ըլլայ նոր զրպարտութեան մը վտանգէ և մեծապատուր ծախսեր ընելէ: Թէպէտև Կեղրնական Վարչութեան կազմած յանձնախմբին տեղեկագրոյն համեմատ անիրաւ կողմը պիտի տուժէ Վարչութեանս ըրած անորդ ծախսերը, սակայն մեր կրած բարոյական վնասը անդարձանելի պիտի մնայ միշտ:

Երրորդ Ազգայնորդից կալուածոց համար Կեղրնական Վարչութեան հրահանգը՝ ոչ Վարչութեանս և ոչ իսկ մեր գերա. Առաջնորդին կը վերաբերի: Այս մասին Չեր Սրբազնութիւնը կրնայ բանակցիլ վսեմա. Երուսաղէմայ փառայի հետ՝ որ Ազգայնորդից ազգապետն է, կամ անոր մեծապատուր Փոխանորդին հետ:

Ի վերջոյ գալով սահմանադրական օրինաց անթերի գործադրութեանը, Չեր Սրբազնութիւնը կրնայ վստահ ըլլալ, որ եղիպտոսացիք ինչպէս մինչ ցարդ սահմանադրապէս կառավարուած են, նոյնը պիտի շարունակեն և սակէ ետքը. որոյ վասն գերա. Մեսրոպը սրբազանը՝ ընդհանուր քուէարկութեամբ ազգին կամը յարգելու համար, զբաղուէ և այժմ պարտուպատչան նախապատրաստութիւններով: Ի զիմայ Գաղաքական ժողովոյս, ՅԱռաջնորդարանի Հայոց Փոխանորդ ի Գահիրէ, Փետր. 1872 տէր կարապետ քահանայ: Տեղի ազգային կնքոյ

ՎԵՐՍՏԻՆ

ՁԱԽՈՐԳ ԶԱՐԶԱԿՈՒՄ ՄԻ

Ինչպէս մեր նախընթաց թուոյն մէջ խոտացած եմք, ճաշ կը փութամք՝ կարելի եղածին չափ համառօտ կերպիւ և ողուզ հեղութեան պատասխանել մեղի դէմ գրուած երկրորդ ձախորդ յարձակմանը, զոր Սիօնի Յունուար ամսագրոյն մէջ կարգացինք:

Այս ամսատետարին խմբագրապետը նախ մեծապէս կը զայրանայ որ Արշալուսոյ դէմ իւր յարձակմանց ուժոյն համար՝ կրօնական միաբանութեան մի անվստիքէ գրած եմք, և կը հարցանէ թէ ինչ հիման վերայ կը հաստատուէ մեր զրուցածը: Կը պատասխանեմք վերահաստատելով ըսածնին՝ թէ կրօնաւոր խմբագրապետի մը անշուշտ չլլայ իւր լի բարկութեամբ և կրիւք հետեւեալ բառերը գործածել, այսինքն՝ ստախօս, երազատես, երազայող, փարեխեցի, թեթեամիտ, վատ, անամսթ, աչքակապ, լեզուազար, կայլն, մանաւանդ որ ասոնք փաստեր չեն, այլ փաստից պակասութեան յայտնի ապացոյցներ:

Երկրորդ կը զայրանայ, վասնզի զրուցած եմք թէ՛ Սիօնի անցեալ ամին Հոկտ. ամսագրոյն մէջ՝ Առ. Ե. քաղաքային Արշալուսոյ՝ վերնազրով հրատարակուած տարածան յօդուածը՝ ամենա. Եսայի սրբազանին հաճութեամբը շարադրուած չէ, և կը յաւելու թէ Երբևէ Սրբազնութեան մի համար մեծ իմաստութիւն պէտք չէ. քանզի 1870 ամին Սիօնի Հոկտեմբեր ամսագիրը մեր աչաց առջև օրինակ ունիմք. որուն մէջ ամենապատու Եսայի Ս. Պատրիարքը կը խոստովանի թէ առանց իւր պիտութեանը քանի մի անարժան յօդուածներ հրատարակուեր են Եղիպտոսեան Հայոց երեւելին. րէն մէկուն դէմ, և այն պատճառաւ նոյն ժամանակին խմբագրապետ վարդապետը՝ իւր պաշտօնէն հաներ է, անոր վրայէն անհեղձ միանդամայն և տղարանի տեսչութիւնը և սրբազրուութեան պաշտօնը և այլն: Ուստի միթէ զարմանալու և չհաւատալու բան մըն է, որ Սիօնի խմբագրութեան նկատմամբ տարի մի յառաջ տեղի ունեցած անխոհեմ ընթացք մի՛ տարի մի ետև դարձեալ պատահի:

Երրորդ Սիօնի ցատկոտ խմբագրապետը կը զայրանայ, որ զգերապատու Մեսրոպը արքեպիսկոպոսը՝ զոր ինքն Եղիպտոսի ինքնակոչ Առաջնորդ կանուանէ, մեք հանդերձ բոլոր եղիպտոսացի ժողովրդով և ազգին ընդհանուրութեամբ, օրինաւոր և բարեխնամ առաջնորդ կը ճանաչեմք յիշեալ մեծ վիճակին: Այս երրորդ զայրացմանը դէմ իստ պարզ պատասխան մի ունիմք տալու. քանզի Սիօնի 1870 ամին Յունուար, Մայիս և յուլի քանի մի թիւերը՝ գիպուածով մի, ձեռք բերին անցնելով, անոնց՝ բաժանորդաց անուանց ցանկին մէջ տեսնուք, որ Եղիպտոսի Առաջնորդ կոչուած է գերա. Մեսրոպը արքեպիսկոպոսը և երկու օրինակաց բաժանորդ նշանակուած: Արդ՝ ինչպէս կը տեսնուի, Սիօն ամսագիրը այն ժամանակը Եղիպտոսի առաջնորդ կը ճանաչէր զՍրբազնութիւնը՝ մինչդեռ ներկայ տարուոյս Յունուար ամսագրոյն մէջ կըսէ, թէ Մեսրոպը եպիսկոպոսը՝ առանց պաշտօնական հաստատութեան իւր անձն Առաջնորդ հրատարակելով՝ յիշատակել տուած է եկեղեցեաց մէջ: Ինչ քաջատրութիւն տալու է արդեօք այս հակասութեանը. . . . Թող ողջամիտ հասարակութիւնը գտտէ անկողմնակալ սղուով:

Չորրորդ կը զայրանայ թէ ինչո՞ւ համար Եղիպտոսէն Երուսաղէմայ միաբանութեան դէմ գրուած անստորապիւր յօդուածներ հրատարակած եմք Արշալուսոյ մէջ՝ առանց ուշ գնելու թէ անստորապիւր նամակներ և յօդուածներ հրատարակելը՝ ամեն երկրի և ամեն ազգի լրագիրներէն ընդունուած ընդհանուր սովորութիւն մըն է: Կարձեալ կը զայրանայ թէ ինչո՞ւ համար նոյն յօդուածոց հեղինակաց անունները չեմք յայտնուր իրեն: Կը պատասխանեմք թէ՛ ինչպէս որ արդէն յիշած եմք մեր նախընթաց թուոյն մէջ, յետ այսորիկ պիտի աշխատեմք առանց ստորագրութեան չհրատարակել յիշեալ միաբանութեան դէմ Եղիպտոսէն յուղարկուած յօդուածները. իսկ ի մասին արդէն հրատարակուած յօդուածոց հեղինակաց անունները յայտնելու, ամենեւին գծտարութիւն մի չունիմք, և կըսեմք թէ միևնոյն անձինքն են, որոց անունները նշանակուած են՝ Գահիրէէն փետրվար 16—28 ամսաթուով գրուած յօդուածոյն ներքև և զոր լրագրոյս 930 թուոյն մէջ հրատարակած եմք:

Հինգերորդ Սիօնի խմբագրապետ վարդապետը մեծապէս կը զայրանայ, վասնզի զգերա. Մեսրոպը արքեպիսկոպոսը զովութեամբ կը յիշեմք միշտ կըսէ, և կը յաւելու թէ՛ Երբևէ Սրբազնութեան՝ պարտազանցութիւններն երբեք չեն կարող արդարանալ Արշալուսոյ անհիմն ներքողներով և երազապատու գովեստներով: Գայս ըսելէ ետև, կը համարձակի վերտախն պաշտպանել զԱստուածատուր վարդապետը, Կը պատասխանեմք թէ Եղիպտոսի բարեխնամ Առաջնորդը՝ Արշալուսոյ գովեստից ամենեւին կարօտ չէ զինքը արդարացիներու համար. քանզի Արտատնդնուպօլոյ Պատրիարքարանէն կազմուած պատկուելի Յանձնաժողովոյն տեղեկագիրը՝ զոր ազգային լրագիրներն և նոյն իսկ Մասիս, (որուն պատուական լինելը Սիօն ևս կը խոստովանի,) հրատարակած են ի լուր աշխարհի: Այս տեղեկագիրը, ինչպէս յայտնի է ամենուր, կատարելապէս արդարացուցած է զՍրբազնութիւնը՝ դատապարտելով զԱստուածատուր վարդապետը: Արդ՝ Սիօնի խմբագրապետը արդեօք կը քննանայ, որ տեղեկութիւն չունի ազգային կեդրոնական Վարչութեան այս դատապաճուէն:

Իսկ վերջոյ իշխելու քաղաքային գովեստի պատասխանելով կը ըսէ թէ՛ միթէ Ազգայնորդից և Գահիրէ հէի մէջ տեղական իշխանութենէ եղած սիրալիր և լի մեծարանօք ընդունելութիւնը, նմանապէս ազգին կողմանէ եղած ուխտանախերը և դովարանութիւնները, զորս Մանգրու և Փարիզ լրագիրներն ևս հրատարակել են, միթէ կըսեմք, ասոնք ամենքն ևս երազապատու գովեստներ են, երազակա՞ն պատիւներ են:

Վեցերորդ Սիօնի խմբագրապետ վարդապետը զայրացմամբ կը հարցնէ մեզ թէ՛ Միթէ Ս. Աթոռոյս սրբազան նախադասը անձամբ Եղիպտոս չէր, ինչո՞ւ չյանձնուեցան կալուածագրերն ու կալուածներն: Միթէ Իդնատիոս և Սիմէոն եպիսկոպոսներն Եղիպտոս չէին ի կողմանէ ազգին և Ս. աթոռոյս, ինչո՞ւ չյանձնուեցան կալուածներն: Միթէ Աստուածատուր՝ իբրև փոխանորդ Եղիպտոս չէր:

Այս հարցմանը՝ Եղիպտոսէն մեր ընդունած տեղեկութեանցը համեմատ, կը պատասխանեմք նախ թէ՛ ամենա. Եսայի Ս. Պատրիարքին զուրցուեր է այն ժամանակը որ՝ առանց ներկայութե ազգապետ վսե՛ (Երուսաղէմ փառային, (որ բացակայ էր յԱրշալուսոյ), անկարելի է վախճան մի տալ ազգային այս ծանր խնդրոյն: Բայց Երբևէ Սրբազնութիւնը չէ ուղէր ակնաջ կախել այս կարգի խօսքին, և ինք ամիս աշխատելէ ետքը՝ առանց գործ մի տեսնելու վերադարձեր է յԱրշալուսոյ:

Երկրորդ թէպէտև Իդնատիոս և Սիմէոն եպիսկոպոսները լընցուցին Երուսաղէմայ կալուածական խնդիրը. բայց չուզեցին սպասել որ հէօճէթներն ալ հանուին ու զանոնք առնելով այնպէս երթան: Ազգայնորդից ազգային Վարչութիւնը ի ներկայութե գերա. Տալալեանց Պարիս սրբազանին աղաչեց զյիշեալ գերա. եպիսկոպոսները և մասնաւորապէս զՍիմէոն սրբազանը, որ սպասէ և հէօճէթներն առնելէ ետև երթայ. բայց անոնք պատասխանեցին թէ՛ Գատիկը ի Ս. Երուսաղէմ ընել կուզեն, և թէ իրենց կողմանէ Աստուածատուր վարդապետը պիտի թողուն փոխանորդ և Երուսաղէմէն անոր օրինաւոր փոխանորդագիրը պիտի յուղարկեն: Այս օրինաւոր փոխանորդագիրը մինչև ցայտօր տակաւին չհասաւ Ազգայնորդից ազգային Վարչութեան ձեռքը. քանզի Երուսաղէմայ սրբազան Պատրիարքին առ Աստուածատուր վարդապետ գրածը թէ՛ դուրս փոխանորդ ես, անօրուս և ապօրինաւոր է. այլ Երուսաղէմայ Ս. Պատրիարքը և միաբանութիւնը պէտք է ուղղակի գրեն Ազգայնորդից ազգային Վարչութեան, թէ զԱստուածատուր վարդապետը իրենց փոխանորդ կարգած են: Իսկ եթէ Սիօն պիտի կուզէ թէ այսպիսի փոխանորդագիր մի յուղարկուած է, հարկաւ պատճէնը արձանագրուած պիտի լինի վախճանի դիւանատունը. ուստի թող բարեհաճի հրատարակել զայն: Իսկ եթէ չկրնար, թող ուրեմն լուէ:

Սիօնի խմբագրապետը վերջապէս՝ կը յանդգնի ի զգաստութիւն հրաւիրել ազգային լրագրաց երեցագոյնը, անդրանիկ Արշալուսոյ՝ կըսեմք, որոյ հետ՝ դիմէ իբր երէց եղբայր, կը պարտաւորէր պատկառանօք խօսիլ: Բաց յայտմանէ անհարազատ կանուանէ զնա սրբոց Յակոբեանց աթոռոյն:

Այս յանդգնութեանը քրիստոնէական հեղութի պատասխանելով հարկ կը համարեմք ըսել թէ՛ ի մասին հարազատութեան և ազգօգուտ ծառայութեանց Արշալուսոյ, մեր ձեռքը օրհնութեան և շնորհակալութեան կողմանէ կը զգտնուին, շնորհեալ մեզ սուրբ Եղիպտոսեան ամենայն Հայոց քահանայապետներէն սկսեալ երիցս երանաւալ Կերսէս Ս. կաթողիկոսէն, նմանապէս Կ. Պօլսոյ և Երուսաղէմայ Ս. Պատրիարքներէն և շնորհատանի առաջնորդական հովուներէն և այլն: Իսկ Սիօնի խմբագրապետ վարդապետը միթէ սրբէ թղթոյ կտոր մի ունի՞ ձեռքը ի վկայութիւն՝ Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ հարազատ որդի լինելուն և ի վկայութիւն իւր համեստ վարուցը. . . . Եթէ յիշեալ ամսագրոյն անցեալ ամին Իեկտեմբերի տետարկին մէջ՝ Սոյ կաթողիկոսական խնդրոյն նկատմամբ իւր հրատարակած յօդուածոյն նայինք՝ սուրբ Եղիպտոսեան մար Աթոռոյն հարազատ զուակներէն չէ: Բաց յայտմանէ, եթէ մեր լրածը ստոյգ է, յիշեալ երկրորդ խմբագրապետը իւր աշխարհականութեան ժամանակը՝ Խիֆիկի մէջ ի զգաստութիւն հրաւիրուելով ի պատճառս իւր անբարեպաշտ և խռովայող քարոզութեանցը, ստիպուեր է քանի մը տարի յառաջ նոյն քաղաքէն փախստական մեկնել. և ի Ս. Պօլսոյ մերժուելով իրեն:

վարդապետ ձեռնադրուելը, վերջապէս Ս. Երուսաղէմայ վանքը ապաստանուեր և այնտեղ յաջողեր է վարդապետ ձեռնադրուել, և այժմ Սիօնի խմբագրապետութեան պաշտօնը կը վարէ :

Ահա մեր հեղահամբոյր պատասխանը, որ թէպէտ քիչ մը երկար եղաւ և քանի մը մասնաւոր տեղեկութիւններ կը ստանանք, որոս յաւանայից բռնադատեալ հրատարակեցինք, բայց և այնպէս կարծեմք թէ «պատասխանատուութեան դեղեցիկ դաս մը» կըրայ լինել Սիօնի ցասկոտ խմբագրապետին, որ հեղուծեալ երկնային վարդապետին աշակերտ ձեռնադրուած է :

ԿԱՐՏԵՈՐ ԼՈՒՐ ՄԻ

Եղիպտոսացի լի են անսովոր ուրախութեամբ և ներքին հպարտութեամբ մի. քանզի ամենայն Հայոց Քաջահայտեալ Գեորգի Կ. վեհափառ կաթողիկոսը բարեհաճեալ է օրհնութեան կոնդակ մի յուղարկել իրենց, որով Կ. Վ. Ե. հոգևորութիւնը հայրախնամ ուղով կը փութայ Մեսրոպէ սրբազանին Եղիպտոսի առաջնորդական բարձր պաշտօնը՝ իւր հոգևոր ծայրայն իշխանութեամբ ուղղակի հաստատելով : Այն բարեպատէճ առթիւ արժան համարեր է նաև արք. Եղիպտոսի պատիւը շնորհելու Կորին Սրբազնութեան : Հետևաբար Եղիպտոսի դերա. Առաջնորդը յետ այսորիկ իրաւունք ունի և պարտի «Մեհարիք արքեպիսկոպոս» գնել իւր ստորագրութեան մէջ :

Գահիրէէն Մարտ 2 թուականով կը գրեն մեզ թէ՛ գերա. Մեսրոպէ արքեպիսկոպոսը՝ ամսոյ 5ին կիրակի օրը, ինքն անձամբ, հանդիսաւոր բաց պատարագ պիտի մատուցանէ և միանգամայն սուրբ Եղիպտոսի եկած յիշեալ առաջնորդական կոնդակը պաշտօնապէս և եկեղեցական մեծ փառաւորութեամբ պիտի կարդայուի ի լուր համայն ժողովրդեան : Այս հոգևոր հանդիսին ներկայ պիտի դանուի եղբեր Եղիպտոսի իշխանութեան քով դանուող Ռուսաց վսեմա. ընդհանուր հիւպատոսը :

Կ. Պոլսոյ մէջ ապօրինաւոր կերպիւ յուղեալ կաթողիկոսական նորահայտ խնդրոյ մի ցաւալի պարագայի մէջ, վերայիշեալ կոնդակին ուղղակի յուղարկուել և եղիպտոսացոյ կողմանէ արտաքոյ կարգի ուրախութեամբ և շնորհակցութեամբ ընդունուելը՝ կրօնական և քաղաքական նշանակութիւն մի ունին, որ մեծ է. հետևաբար ոչ սակաւ քաջալերական և ուրախակ ազդեցութիւն պիտի ընէ Եղիպտոսայ մայր Ս. Երուսաղէմ հաւատարիմ բազմութիւ ժողովրդոց :

— Եղիպտոսէն դարձեալ կը գրեն մեզ թէ՛ բարձրապատիւ Խըրիվը՝ ներքին կողմերը ըրած իւր ճանապարհորդութեան ի Գահիրէ վերադառնալով, գերա. Մեսրոպէ սրբազանը փութացաւ սովորական կերպիւ իմաց տալու թէ կը փափաքի՝ Բ. Կոնստնտին տրուած հրովարտելու մատուցանել Կ. Բարձրութեանը, յաւելցնելով միանգամայն թէ՛ հրովարտակ չունեցած ժամանակը հաճեալով մեծ մարդասիրութեամբ և պաշտօնապէս ընդունել զինքն, այժմ պաշտօնական ընդունելութեան հարկ չկայ, միայն թէ իւր խորհիւն և ակնածական յարգանքը խոնարհաբար մատուցանելու համար կը բազմայ Կ. Բարձրութեան ներկայանալու պատիւը ունենալ :

Փոխարքայի մեծապէս զոճ ըլլալով այս խոնարհափայ յաջող խօսքէն, անմիջապէս հրաման կընէ որ քառաձի շքեղ կառք մի յուղարկուի հանդերձ թէ՛ ըրիֆաթի պաշտօնատարով մի : Եղիպտոսի գերա. Առաջնորդը նոյն կառքով կը փութայ ի փոխարքայական պալատը երթալու. ուր ի մտանելն՝ իւր երկու կողմը 3-400 հրացանակիր զօրք կը տեսնէ կարգաւ կայնած, որոնք ի ձայն զինուորական նուագարանաց կը բարեկն զինքը :

Բարձրապատիւ Խըրիվը՝ որ սանդուխթին գլուխը կայնած էր, խիստ մարդասիրութեամբ և մեծարանօք ընդունեալ է զգերա. Մեսրոպէ արքեպիսկոպոսը և կէս ժամու չափ յոյժ սիրալիք տեսակցութեամբ պատուեր է զնա : Կորին Սրբազնութեան մեկնելու ժամանակը մի և նոյն փառաւոր յարգանքը ի գործ դրուեր է, ինչպէս որ եկած ժամանակը :

— Ասածնուս նայելով՝ վեհափառ սէր Գեորգ սրբազանոյ յայն կաթողիկոսին ազդասիրական խնամքը Ռուսաստանի մէջ ի նպաստ Բերայի հրկիզեալ Հայոց ժողովուած գրամը՝ այս օրերու հասեր է ի Կ. Պոլսու Ռուսաց գեղարհատունը, և նոյն գումարին արժանապէս բաժուելուն կերպը կը մտածուի եղբր :

— Կ. Պոլսոյ ազգային լրագիրները հետեւեալ գայթակղական դէպքի մը ծանուցումը կը պարունակեն. զոր մեք ևս, ցաւալի սրտիւ, կը հրատարակեմք :

ՊԱՏՏՐԻՍՐԻՍՏԱՆԻ ԱՁԳ

Գումարաւոր մայր եկեղեցոյ տէր Գասպար անուն քահանայն նոյն թաղի սուրբ Յարութիւն եկեղեցոյն սենեակին մէջ անհաւաստ օրիորդի մը վրայ դադանա կան սպազտութեան փորձեր ընելը՝ նոյն իսկ աղջկան մօրը տեսնելով և քահանային պատկառ խօսքերով ստուգուած, և մայր եկեղեցոյ պատուարժան խորհրդապետ քահանայից քննութեամբ և ի պատրիարքաւ ընտրուած տեղեկագրով վաւերացեալ ըլլալուն՝ որոշուեցաւ որ՝ յիշեալ տէր Գասպար լուծուած է պատահեալ ի կարգէ քահանայութեան մինչև ցվական իւր, և այս եղանակով ընտրուած ի պատիւ քաջոյ զըրկուած է ի Կիրարու, ուր պիտի ապաշխարէ :

Այսպիսի անբարոյական և անարժան քահանայի մը չարագործութիւնն և իւր պատիւն հրատարակելով ի լուր առհասարակ ամենայն Ս. եկեղեցեաց և բարեպաշտ ժողովրդոց մերոց կը դադարեցանք զամենեկին չի դալթակղիլ երէք այդպիսի անհամեստ պատահարներէն, այլ զիտնալով զի այդպիսիք չեն կարող միւս անգամ ընդունիլ ի պաշտօն սուրբ եկեղեցոյ, առարկի եկեղեցականաց յարգը առաւել ճանաչեն և մեծարեն :

Կ. Պոլս, 26 Փետրուար 1872 (ԿԵԻՔ)

ՄԱՆՍՈՒՆՈՒՅԻ



Տատեան ազնուափայլ գերդաստանը ցաւալի յոյժ կրօնատ մի ըրաւ, որ ոչ նուազ ցաւալի է նաև բոլոր ազգին համար : Ասեմա. Երուսաղէմ, Երկրորդ որդի արքունի վաստակաւ հանդուցեալ Յօհաննէս—Պէլին Տատեան, որ ժամանակէ մը ի վեր անբուժելի ակտիւ մը վարակեալ էր, անցեալ ամսոյ 22ին իրիկուան դէմ առ Աստուած փոխեցաւ ի Մարրի գեղն Կ. Պոլսոյ յանմիթար սուգ իւր աղիւ ըծակցին և զաւակացը, ինչպէս նաև բոլոր Տատեան գերդաստանին :

Հանդուցելով որ հազիւ թէ 46 տարեկան կտր, իւր խոհական ու մշակեալ մտքովը, իւր ազգասիրական վեհ դրացմանովը և իւր բարեարտութեամբ սիրելի հանդիսացած էր ամենուն, և յարգ ու համարում ունէր Բ. Գրան առջև. որուն զանազան պաշտօններու մէջ զըտնուած և ամենայն հաւատարմութեամբ ու յաջողակութեամբ ծառայած է :

Հանդուցելոյն յուղարկուողութեան տխուր հանգէսը արժանաւայել վառարտութեամբ կատարուեցաւ և մարմինը ամփոփուեցաւ Մարրի գեղի եկեղեցոյն մէջ իւր բարեկշիւտակ ծնողացը քով :

Սուրբ Եղիպտոսայ վեհա. կաթողիկոսին ազգասիրական և ուսումնասիրական խնամքը իւր սպառնայ տրժան կը համարեմք յառաջ ընելու աստ այն ամեն հայաբնակ քաղաքաց սնունդը՝ որոյ ազգային վարժարանաց մի մի Արարտ ամառայի կընծայուի ի կողմանէ Կորին Վեհափառութեան : Յիշեալ քաղաքներն են՝ Խզմիր, Ալեքսանդրիա, Կալիփաթ, Մատրա, Հալիպ, Սոյ վանքը, Երեսիլ, Զէյթին, Հանդէպ, Ստանա, Հաճըն, Կեսարիա, Բէթլեհեմ, Գաղատիա, Պրուսա, Պալքէսէր, Տարսուս, Երզնկա, Արտասի, Արասի, Իզմիր, Վառնա, Լաթիք, Մոլտուպլաք, Հասանգալէ, Կ. Պոլս Գումարաւոր, Խապէտ, Խալիպատար, Փրիզի հիւանդանոցը, Օրթոգէտ, Ալաթիա, Բէրա, Սամաթիա, և այլն, և այլն :

— Ի տեղեկութիւն տարբանական ժողովոյն սրբոյ Եղիպտոսի կը ծանուցանեմք թէ Պաղարկայի մեր յարգոյ և ազգասիր բարեկամներէն պարտաւ Մ. Արարտանան, Գրիգոր Ե. Գասպար և Մ. Պ. Մայիլ բաժանորդ դրուած են, ձեռամբ մերով, Արարտ ամառայոցն վասն մի մի օրինակի, սկսեալ ներկայ տարուոյ Յունուարին, և պարտատ են ի վճարել զտարեկան արժէքս բաժանորդարութեան իրենաց. սակայն կը պահանջեն ի տարբանական ժողովէն որ ըստ ժամանակին յուղարկէ Խզմիր գլխեալ ամառային, որպէսզի մեք ևս կարող ըլլամք հասցնել ի Պաղարկա, ինչպէս նաև ի Կալիփաթա ուր բաժանորդք կան և որոյ թիւը կըրայ աւելնալ. բայց Մարտ ամսոյն կենն իմք և Յունուար ամիսը զիս չհասու :

ՏԱՂ

Շարադրեալ հանգուցեալ Մեսրոպէյ թաղիադեանց յամին 1841 ի Հնդկաստան :

1. Լուր ինձ թուեալ թաղիադեանց, որ իմ հաղորդ թախտանաց, թողեր քո վառքս հայրենեաց, Փորձել զաշխարհ այս սուտ և սին :
2. Արդ զիմ ընկալ խրատ անոյշ, թէ այր շողմնդ տայցէ քեզ նուշ, Մի առնուցուս, թուեալ, զդոյշ, Ձի կեղև է դատարկ և սին :
3. Թէ այր միգող տայ քեզ ընկոյշ, կամ կին կաւատ բան մարդկոյշ, Մի միջուկին լինիր ի խոյշ, Քանզի փեճեկ է սոսկ և սին :
4. Թէ կոյս աղջիկ քեզ երդնուցու, Ձիւր սէր՝ առանց զեղին ոսկոյ, Բանից նորա մի անսար դու, Քանզի հոզմ է դատարկ և սին :
5. Թէ վարդապետ որ ասիկար, Խոտանայ քոյ դասեր զաս տալ, Արդ նորա մի հաւատար, Քանզի խորհուրդն է չար և սին :
6. Թէ ամուրի որ քահանայ, Գլխոյդ Երեկ քաղէլ ցանկայ, Իմացիր որ չար սատանայ, Քեզ որդայթ լարէ սին, սին :
7. Յորժամ ասես բոլոր մեղան, Եւ հարցանէ թէ այլ լինէ կան, Իմացիր որ քուտ է այն, Եւ թողութիւն նորա է սին :

Ողորմութեան դուռն փակիր, Հարստութեանը յուսացիր, Եւ թողութիւն դու յաշխարհում, Կայք հանապաղ մեծ վտանգում :

ՅԱՆԿ ԳՐՈՑ ՈՄՄԱՆՑ

Գրքի անուն	Գրքի արժեք	Գրքի անուն	Գրքի արժեք
Աղահն . . . . .	5	Հերթու մի կարծեաց . . .	04
Աղիւն . . . . .	7	Հոգևոր արարողութիւնք . .	4
Աղանայ բժիշկ . . . . .	4	Մաթիլա, 4 հատոր . . . . .	80
Աղթաղիք. Հասարակ կաղմ .	7	Մանր ուսմանք Բրիտանիական հաստոց . . . . .	4
Ոսկեգոծ . . . . .	9	Մարդ . . . . .	2 1/2
» թաշապատ . . . . .	30	Միքթո-Մէլլա, Ժանու և Գոլէն, շերտակ ու Սև . . .	5
» » արծաթազօծեալ և սոխազօծեալ շրջանաօք . . . . .	50	Մուսթապա Բրիտանիական վարդապետութիւն . . .	3
Փորակիցայ . . . . .	11 3/4	Մուսթապ սուրբ Մեսրոպէան վարժարանին Ձմրուանից .	3
Ամբի . . . . .	20	Մատարկ . . . . .	3
Արքեպիսկոպոս . . . . .	1 1/2	» » . . . . .	4
Այսա . . . . .	4	Մօնթէ-Բրիտանի կոմս, 6 հատոր . . . . .	90
Անդէղա Գաճիօլի . . . . .	1 1/2	Նասրէտոյն խօսքի ծաղրաբանութիւնք, Բ տխր . . . . .	2
Անճէթ . . . . .	5	Նարեկ, Բ տխր . . . . .	20
Ապաստանարան սիրոյ Մէլլա . . . . .	2	» ոսկեգոծ . . . . .	30
Գաղապատ . . . . .	2	Նոր-Տամ փարիզի, 3 հատոր .	45
Արեւելեան Մամուլ. տարեկանը .	91	Ունիք զրատիութեան . . . . .	8
Արիի Արարտեան . . . . .	25	Ռաֆայէլ . . . . .	15
Գաղանիք Փարիզի, 8 հատոր .	120	Սարթր մեմուտ Ֆէնը տէր Փաթիթ. Ա և Գ հատոր .	40
Գաղանիք Փարիզի վիպասանութեան թատերադրութիւնը .	10	» . . . . .	30
Գաղանիք և Հայերէն . . . . .	4	Սէրը բժիշկ է . . . . .	3
Գասաէլը . . . . .	5	Սօն Ապիստոստոս սէր կիւղէլի օրան վուգուսթ . .	4
Եղիլէ . . . . .	8	Վալէրիա և Լը Պարպուլիէ . .	40
Երեք հրացանակիրք, 3 հատոր .	45	Վերթէր . . . . .	10
Երկուսից Երեք երկուց ընկերակցաց . . . . .	6	Վիլիօրթ . . . . .	14
Ելիկա . . . . .	31 1/2	Տէր իմ Յիսուս . . . . .	10
Ընթերցարան . . . . .	8	Տոնարակալութիւն գործնական .	20
Թշուառք, 10 հատոր . . . . .	180	Տօրա . . . . .	20
Ժէնըվիէ . . . . .	5	Փամէլայի առաքնութիւնք . .	7
Լէօ կամ Արիստ Ժաղի մը սէրը .	8	Փայտայ խաչը . . . . .	2 1/2
Լուի Ժէ . . . . .	11 3/8	Փօլին . . . . .	10
Լուքսեմբուրգ Գործնա . . . . .	5	Բերականութիւն Հայերէն լեզուի . . . . .	12
Մաղիլի, 3 հատոր . . . . .	300	Բրիտանիական վարդապետութիւն, Գ տխր . . . . .	4
Վիլիլիքի ճանրողութիւնք . . . . .	18	Օտմանեան պատմութիւն . .	15
Վոլիտային ցուցակը . . . . .	2	Օրիորդ Լա Բէնիկի . . . . .	18
Հաղար ու մէկ զիշերներ, 6 հատոր, Բ տխր . . . . .	90		
Հասարակ աղջիկը, Բ տխր . . .	4		
Հեղարան . . . . .	2		

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ

Երեք հրացանակիրք. Իվանով. Հայկական նամականի. Մանու Լէպօ. Կրտչիլլա. Արքատ երկուսարդի մը վէսը :

ՔԱՆԱՔԱՆԻՔԻ

Զմիռնիա, 11 Մարտ:

Անդրրուսիանը և բարեկարգութիւնը հաստատուն կը մնան մարդասիրական խնամք մեր ընդհանուր կառավարիչ վսեմա. Համտի փառային. որ իւր տեսչութեանը յանձնուած նահանգին բարորութիւնը համար կարելի եղած ամեն միջոցները 'ի գործ գնելու կաշխատի անդադար:

— Անցեալ շաբթու մեծ հրդեհ մի տեղի ունեցաւ 'ի Տալիշանը քաղաքը, և կրսն թէ 200 խնուր և 15 ի չափ տուն հրոյ ճարակ եղեր են:

— Քաղաքիս ծովեզերեայ բնակիչները՝ ըստ մեծի մասին, գեղըրը երթալու վերայ են յերկիւղէ հիւանդութեանց, որ ամառը տեղի պիտի ունենան, կըսուի, լճացեալ անշարժ ջրոց ժահահոտութենէն, որ քարափանց (quai) շինութեանը պատճառաւ գոյացեալ է:

— Իզմիրի Անուայ ընթերցարանը երեքշաբթի օրը փակուորութեամբ կատարեց իւր տարեգարձին հանգէսը. որուն ներկայ էին 'ի մէջ այլոց, Յունաց Ս. Մէտարայօլիւրը և հելլենացոց հիւպատոսը:

— Չմիռնացի յարգոյ կարագետ աղան Աղաբէկեան, որ Ամբիկայի մէջ ատամնադորձութեան արհեստը կատարելագոյն սովորելով՝ բաւական տարիէ 'ի վեր մեծ յաջողութեամբ 'ի գործ կը զբոսնէ զայն 'ի Վ. Պօլիս, այժմ 'ի քաղաքս կը գտնուի քիչ ժամանակուան համար և պարտատ է արուայի հիւանդութիւն ունեցողներուն դարման տանիլ:

— Ոմանք կըսեն թէ Վ. Պօլիսի իրուաց գեսպան վսեմա. 'ի Նիւաթիէֆ զօրապետը՝ Ռուսիոյ տէրութեան նախարարոց յանձնաժողովոյն նախագահ կարգուեր է. իսկ ուրիշները կը հաստատեն թէ այս պաշտօնը 'Երին Վսեմութեան հօրը՝ Բալլօ Նիւաթիէֆ զօրապետին տրուեր է. Բայց ստոյգը այն է որ, Աղաբէկեանը վեհափառ կայսրը հաճեցաւ Աղաբէկեանի 'ի Վսեմութեանը անաշխատ աստիճանի շքանշանը շնորհելու իւր գեսպանին որ 'ի Վ. Պօլիս, այսինքն 'ի Նիւաթիէֆ զօրապետին. նմանապէս սրբոյն կատարիչի կարգին անաշխատ աստիճանի շքանշանը մատամ Նիւաթիէֆին:

— Մօտերս Տիֆլիսի մէջ հաստատեալ Մշակ անուն պատուական լրագիրը կը ծանուցանէ, թէ փետրվարի 16ին 'ի Շամախի ճակատին երկրաշարժ մի պատահելով, գրեթէ բոլոր քաղաքը կործանուեր և շատ մարդիկ փրատակաց ներքև մնայեր են: Ռուսաց օգոստափառ կայսրը քսան հազար մանէթ շնորհեր է երկրաշարժէն փասելոց:

— Վսեմա. Միքալ Մելքում խնը՝ Պարսից տէրութեան Մեծ-Նպարդօսին խորհրդական կարգուած ըլլալով, այս շաբթու մեկնեցաւ 'ի Քիւսիս երթալու: 'Երին Վսեմութիւնը քանի մը տարիէ 'ի վեր Բարձրագոյն 'Երան ծառայութեանը մեջ կը գտնուի 'ի Վ. Պօլիս. ուր ամուսնացած է Պ. Տատեան վսեմա. Առաքել-Պէյի զօրքը հետ:

— Արտաքին գործոց պաշտօնեայ վսեմա. Սերուէր փաշան Օսմանիէ կորդին անաշխատ աստիճանի շքանշանու պատուեցաւ 'ի վեհափառ Սուլթանէն:

— Վրլսմէթ թէ Պէրուսի մարտապետ Ռոբերտալեան մեծաշուք Միքայէլ էֆէնտին 'ի Պօլիս հաստատեալ մարտապետ խորհրդոյն անդամ կարգուեր է:

— Արհաստատեն թէ Վեօլէ օղլու մեծաշուք Զա. կոր էֆէնտին 950 լիւա փոխ տուեր է օգոստափառ Սուլթանին յատկացեալ արքունի դանձուն:

— Երանտոսին մեծափառութեան արտօնութիւնը խրիսթաքի՞ Օշրափօս էֆէնտին և Չարիֆի էֆէնտին շնորհուցաւ, որոյ 'ի փոխարէն տարին 400 հազար լիւա պիտի վճարեն Բարձրագոյն 'Երան:

— Օսմանեան կայսերական հիւանդանոցի նախորդ տեսուչ վսեմա. լորտ Հօյէրթ՝ Մարտաքի կառավարիչ անուանեցաւ:

— Լոնտոնէն կը զրկեն. թէ վսեմա. Մուսթիքի փաշան, որ օսմանեան գեսպան է 'ի յիշեալ մայրաքաղաքն, արտաքին գործոց պաշտօնէին տուած հացիկութէն դառնալուն՝ ապարանքին սանդուխթէն իջնելու ժամանակը վար իննալով, դժբաղդաբար աջ բաղուել կոտրեր է:

— Արարապայ Դեկտեմբեր ամսատարին 478 երեսին մէջ ճանաչութեամբ սրտի կարկայինք Ս. Սինոքին խնամատարութիւնը 'ի մասին բարեկարգելոյ զյուզարիւմն նոյն ամսագրոյն 'ի թուրքաստան և 'ի

Չմիռնիա: Արարապայ գրածին նայելով, յիշեալ ամսատարին յապարկումը՝ Ռուսիոյ արքունի սուրհանգակատան անհողութեանը կը վերաբերի. որուն համար՝ Ս. Սինոքին կողմանէ «ըրադուլթիք պիտի բացուին, կըսէ, հարկաւոր եղած տեղեաց հետ»:

— Արարապայ մէջ մէկ երկու անգամ առիթ ունեցանք գրելու, թէ Երուսաղէմայ միաբան արժանա. 'Երեսէ վարդապետը նուիրակութեամբ 'ի Հնդկաստան երթալուն, 1000 լիւա ստացաւ հին կտակէ մի:

Արարապայի մեր մեծ. թղթակիցը կը ծանուցանէ մեզ թէ այժմ, յիշեալ արժանա. 'Երեսէ վարդապետը ոչ թէ 1000 այլ 2000 անդրակաւան լիւա ստացած է հանդուցեալ Պ. Մանուկեանի և ուրիշ հրեախոյ տոհմներէն. որոյ վերայ եթէ յաւելցնենք, կըսէ, 4 կամ 5000 ռուբլի հաւաքուած դրամը վասն նուիրակութեան, յայնժամ 'Երեսէ վարդապետը 2500 անդրակաւան լիւա Հնդկաստանէն բերած կը լինի 'ի վասն սրբոց Յակոբեանց:

Յարգոյ կարգովը Արարապայ,

Այս կիրակի իրկուն տուն կողպտուելով՝ անմիջապէս իմաց տրուեցաւ քաղաքիս ոստիկանութեան, որուն ջանից և խուզարկութեանց շնորհիւ մէկ երկու օրուան մէջ թէ՛ գողերն և թէ՛ գողցուած նիւթերը ձեռքս անցան: Այս մասին իմ խորին շնորհակալութիւնս հրատարակու էր յայտնելու ոստիկանութեան զլուս հազարապետ Խարաշիմ աղային և Տէմիր աղային:

Խնդրելով որ երկուսիս անկիւն մը շնորհիւ Ձեր պատուական լրագրոյն մէջ՝ մնամ:

Իզմիր, 3 Մարտ 1872 Պ. Հ. Շահմիքիեան:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Աֆիօնի գիւղը, զոր մեր նախընթաց թուով 160 զուրուշ նշանակած եմք առ չէքին, հաստատուն կը մնայ. վասնզի ծախու առնող պակաս չէ: Արսուի թէ Հողանտական ընկերութիւնն ևս միայն ունի առնուլ: Մեր վաճառանոցին մէջ առայժմ հազիւ թէ 1000 կողով աֆիօն կը գտնուի:

Բամպակը հանդարտութեան մէջ է, և գիւղերը 516էն 535 զուրուշն կենդանալը:

Ոչնաբի բուրգէն 120 քուրձ վաճառեցաւ այս շաբթու 445 զուրուշ կենդանալը:

Փալամուտը և ճէհրին հանդարտութեան մէջ են:

ՆԵՆՈՒՅՈՒՄ

Եֆէնիճէ կոչուած ծխախոտի խանութ, որուն տէրն է քեր Նիքուոս Իօաննու հաճի Բօսթի:

Այս նորաչին խանութը յատկապէս Եֆէնիճի և Մանիսայի պատուական տեսակ ծխախոտներ կը ծախսէ, ինչպէս նաեւ գանգալ տեսակ սիկորներ, և բուրա կոչուած տեսակը, սիկարի բուրգ եւայլն: Գիւղերը ջափառք են. և հետեւաբար յիշեալ խանութանը կը յայտնուի իրեն զիմուկները ամեն կերպիս գոն պիտի քլլան: Այս խանութը կը գտնուի Ֆրանկաց քաղը Եօփոյին Ֆրեմբիսանէին դրան կից, քիւ 58:

Նորին կայսերական վեհափառութեան Սուրբանի յուսակար Սպարապան Երբարց մէկը՝ Սպարապան կրկին 'ի Չմիռնիա վերադարձած քլլալով՝ Անգղիական Բագիմոյի Ֆրանկային մեջ նորահաստատ գործարան մ'ուներանց, և արդէն անոր բացուած քլլալը քաղաքիս յարգոյ հասարակութեան ծանուցանելու պատիւ ունի:

Լուսակարի գանգալ տեսակ հնարքներին 'ի գաւ՝ Եֆէնիճի կոչուած նորահաստատ արհեստն ալ պիտի գործադրէ՝ իր գոնուանակութիւն հասարակութեան:

LA VELOUTINE.

Լ.Ս. Վ. Լ. Ուիթիլ կոչուած բրիգնի փողին (բուտրա), որուն պատուականութիւնը կատարեալապէս վորձուած է. ձանցուած է շատ տարիներէ 'ի վեր, մարքասիք կամ պիւմիք անուանեալ տեսակ մի սպիտակ հանքով պատրաստուած քլլալով, մարդոյս մորթոյն վերայ օգտակար ազդեցութիւն կընէ: Այս գերմակ փողին՝ որ կ'ազուց (եպիլոզան) է և գրեթէ ամենեւին աջքի ջուսնուիք, մարդոյս մարմնոյն բարձրութիւն և հետեւաբար կակոզութիւն մի կուտայ:

Այս պատուական փողին Փարիզի մէջ Լա Բի կոչ-

ուած փողոց Ե. Յար փոմատանին քով, իսկ ուրիշ քաղաքները ամեն փոմատանիներուն և Ֆրեմբի սափիւցներուն քով կը գտնուի:

Մեծ շտեմարան տեսակ տեսակ բարդերու՝ պարանոցի և կրակի գանգալ փորքի պոլսաներ և ուրիշ մանր բաներ բանելու համար, որոնք նոր հասած են Երուսաղէմ և իսիստ ջափառք գիւղերով կը ծախուին: Այս շտեմարանը կը գտնուի Ֆրանկաց քաղը Լազարիստ կրօնարար կողմէն անցքին մէջ:

ԳՐԻԱՆԳԻՆ ԲԱՐԵԿԱՍԸ



ԳԵՂԱՆՍՏԻ ՀՈՒՆՈՒԹԻՒՆԻ

Մարդոյս ջգտին գրութեան (օրիֆէ) շատ յորձած ըլլալը՝ որովհետեւ արտ մըն է և իրերուն ամենափոքրիկ շարժումը կամ դրոգը արտ թիւնը վշտալի է յոյժ. վասնզի սուր գոնեալ է անոր գեղը: Միակ գեղը այս է. քիչ խմ գինի, գարեջուր, և ոգևոլց ընդդէմը. և աւելի ազիկ կը ըլլայ որ բոլորուին հեռանա առնանց, և ամենին շուս. նմանապէս խաճի մի խմք, և անոր յետ թեթեմ թեթեմ (չոյ) գոհ լինի: Արեւի եղածին շափ Երեսէ շատ միս կեր և համեմունք (սուշ) հեռի կեցիք: Եթէ այս օրտակար կանոնները ճշգրտութեամբ 'ի գործ գնելու ըլլաւ, միայն շուսով պիտի հանգստանայ, մարմնը առողջ պիտի ըլլայ և պիտի մոռնա թէ ջրոց շարժումն ունեցար:

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆԻ ԵՐԻԿԱՍՄԱՆՑ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մէջ, թէ կը կարգուի շափ և աւելի ջրոց կը ըլլան կամ բաւական չեն ըլլալը, թէ բարը կամ աւագը երկխոսանց կը հասնին կամ թէ անոնց մեջ ցաւեր կը գոյանան մեջքին համապատասխանաժ մասը: Այս ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հողուէի գեղահասակ ըլլալու տեղեւ հրահանգ համեմատ և անոր սպիտակութիւնը ըլլալու երկխոսանց վարի կողմը անկողին մոտեցու ժամանակը: Այս գործարանը անմիջապէս օգտու թիւն մի պիտի մատուցանէ, այնինչ անոր զեղերը զար տեղը գործարանը պիտի ըլլան:

ԱՍԿՐՈՒՄԻ ԱՐԻՒՆԻԸ

Ար և Ե գեղ մի չկրնար ստանալ զօրութիւնը նորոգել և աղելկնել զայն շուսով՝ ինչպէս այս գեղահասակը որոնք անբաւ խանութեան կամ փաթար կերակուել պատճառաւ բոլոր թեթեմ արտ թիւնը կը վսեմեն և Ե հասնին 'ի Երեսէ (հարձ Ե Երեսէ) որուն կործակութիւնը կը կարգուի. ինչպէս սաստիկ ձգտանք (սուշ) գեղերու մէջ սրանցիկ ներգործութիւն մի անի և լեզու ու ստամոքսի ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ:

ԲՈՐՈՒՄԻ ԹԻՒՄԱՆԱՍԻՑ (ԳՐԵՒԵՐ) ՀԱԶ ԵՒ ՀԱՐՈՒՂՈՒՄ

Շնչառութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութիւնը ամեն անխնայ աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վսեմագատ է: Ասոնց գործարանց անկարգ ընթացքին առաջին նշանները կրնան միշտ կարգադրուի. Հողուէի հաւակար գեղը հատից միջոցաւ: Ասոր շուսով կը գործանեն արեան օր և Ե սու. ժամանակեայ անկարգութիւնը, կը թեթեմ խոցուած շնչառութիւնը կը բարեխանեն շնչառութեան սաստիկ արագութիւնը և կործակութիւն կուտան շնչառութիւնը և թոքերուն զերութեամբ ու կործանարարութեամբ: Այս գեղահասակը՝ իրենց մարդոց զօրութեամբ կը սրեն արեան ամեն աղակով թիւններէն, և այս եղանակով կը գործանեն զգրութիւնը (օրիֆէ) ընդհանր Երեսէ կան արտի, ինչպէս կը ըլլան և ուրիշ թոքային սկարութեանց:

ՏԿԱՐՑԵԱԼ ՄԱՐԳԻՆՅՈՒՆ ԲԱՂԿԱՅՈՒԹԻՒՆԻ

Տկարութեան, թուլութեան և ջրացառութեան գեղերուն մէջ, որոնք օր և Ե րնան կամ գերնակաւ շափազանցութեան յատկապէս կը ծախուին, այս գեղահասակը այլալէ և նորոգիչ ներգործութիւնը մեծապէս օգտակար է. քանզի մարդոց թիւնը կը վերահաստատուի, մարմնոյն ամեն հիւանդութեանը կը կանոնաւորէ, ջրային գրութիւնը կը զորացնէ, հիւանդին միայն կը յարգարէ և վերջապէս առողջութիւնը ձեռք կը բերէ:

Հողուէի գեղահասակը ամեն օգտակար գեղերն են հետեւեալ հիւանդութեանց համար:

- Շնչառութիւն, Յօդացառութիւն, Թոքացառութիւն,
- Մարմնային արտ, Տեսառութիւն, Երեսէ արտ, Երեսէ արտ,
- Խիթ (սուշ), Զրգողութիւն, Միկարգութիւն,
- Հարբուցի, Անմարտութիւն, Բարբոսութիւն,
- Երեսէ արտ, Գարգիլ, Ախար ընդերաց,
- Թոքային արտ, Բարբոսութիւն, Անկանոնութիւնը կործակութիւն,
- Քար կամ խճ մեղանոց, Երեսէ արտ, Մարմնային հիւանդութիւն,
- Մարմնային հիւանդութիւն, Երեսէ արտ, Մարմնային հիւանդութիւն,
- Փողացայ, Արտիկանութիւն, Խոցողութիւն,

Գիտեալ արտն է որ արտեալ հրահանգներ կան ամեն ընդհանրօրոյն մէջ հաս կը գոնուի խոցանցիւր սուսիկն մէջ 'ի տեղի կու թիւն հիւանդաց, ամեն պարագայից մէջ: Այս գեղահասակը, որ կը շինուի Հողուէի բժշկին անմաս կան վերահասակութեամբ, կը վաճառուի իր գործարանը 'ի Լոնտոն, Սթրիտ կոչուած թաղը թիւ 24, 'ի զին 1 և 1 ուրիշ շրջան 2 1/2 և 3 1/2 շրջան սուսիք, ըստ մեծութեան արտ:

Խմբագիր—Միքայիլ Մարտաքի,

Գրատպութիւն—Պալլապարիս: